

## «Հրդեհների վիճակագրություն»

2013թ. 9 ամիսների ընթացքում ՊՀ և ՏԱ տեսչության կողմից հաշվառվել է 1192 հրդեհ՝ շուրջ 301 միլիոն դրամի նյութական վնասով: Հրդեհներից զոհվել է 8, վնասվածքներ ստացել՝ 25 մարդ: Ոչնչացել է 25 շինություն, 32 միավոր ավտոտրանսպորտ, շուրջ 585 տոննա անասնակեր:

2012թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել էր 1088 հրդեհ՝ շուրջ 358 միլիոն դրամի նյութական վնասով, հրդեհներից զոհվել էր 11 և վնասվածքներ ստացել՝ 224 մարդ: Այսպիսով, հրդեհների քանակն աճել է 104 դեպքով (9.5%), իսկ նյութական վնասի գումարը նվազել է շուրջ 57 միլիոն դրամով (16%): Ջոհերի թիվը նվազել է 3-ով (27.3%), իսկ վնասվածք ստացածներինը՝ 199-ով (88.8%):

Հրդեհների քանակը նվազել է Լոռու և Արարատի մարզերում, իսկ աճել՝ Երևան քաղաքում և Շիրակի, Տավուշի, Արագածոտնի, Վայոց ձորի, Կոտայքի, Սյունիքի, Արմավիրի ու Գեղարքունիքի մարզերում:

Ջոհերով հրդեհներ են գրանցվել հետևյալ տարածաշրջաններում՝ Շիրակ՝ 4, Գեղարքունիք՝ 2, ք. Երևան և Արմավիր՝ մեկական: Դրանց առաջացման պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, անզգուշությունը ծխելուց, վառարանների և էլեկտրական սարքավորումների տեղակայման ու շահագործման կանոնների խախտումը: Ջոհվածներից 4-ը՝ տարեցներ են (70 տարեկանից բարձր): Ջոհերի զգալի մասը՝ 6-ը, գրանցվել է բնակելի հատվածում:

Վնասվածքներով հրդեհներ են գրանցվել հետևյալ տարածաշրջաններում՝ ք.Երևան՝ 10, Արարատ՝ 5, Արմավիր՝ 4, Շիրակ՝ 3, Կոտայք, Արագածոտն և Սյունիք՝ մեկական: Դրանց առաջացման պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, էլեկտրական ու գազով գործող սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, անզգուշությունը ծխելուց, վառելանյութի արտահոսքը և պայթյունը: Վնասվածքներ ստացածներից 2-ը երեխաներ են, իսկ 4-ը՝ տարեցներ: Վնասվածքների կեսից ավելին՝ 13-ը, արձանագրվել է բնակելի հատվածում:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 52.9%, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 19.8%, կրակի հետ երեխաների խաղալը՝ 12.1%, վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 2%, հրկիզումները՝ 1.2% և այլ պատճառները՝ 12%:

Հրդեհների 53.6%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 46.4%-ը՝ գյուղական բնակավայրերում: Հրդեհների 41.7%-ը տեղի է ունեցել բաց և խոտածածկ տարածքներում, 33.9%-ը՝ բնակելի հատվածում, 9.5%-ը՝ ավտոմեքենաներում, 2.6%-ը՝ առևտրի, հանրային սննդի ու սպասարկման օբյեկտներում, 1.1%-ը՝ ավտոտնակներում, 1.1%-ը՝ արտադրական շենքերում, իսկ 10.1%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում:

Տեսչության տարածքային մարմինների կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 213 որոշում, որոնց օրինականությունը ստուգվել է համապատասխան տարածաշրջանների դատախազությունների կողմից: Գրանցվել է խոշոր հրդեհի 38 դեպք, որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է ընդհանուրի 63.8%-ը:

ՀՀ ԱԻՆ ՊՀ և ՏԱՏ ՀՀՎՀՔ բաժնի պետ  
Ս. Հայրապետյան